



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԲ, 1863 — ԻԱ. ՏԱՐԻ. — ՆՈՅԵՄԲԵՐ

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ի ՓՈՔՐ Ե Ի Ի ՄԵԾ ՀԱՅՍ

ՃԱՆԱՊԱՐՀ ՅԱՄԱՍԻՈՅ ՅԵԻԴՈԿԻԱ

Իյնեպագար, գիւղ Տաճկաց վեց ժամաւ հեռի յԱմասիոյ. երևելի է շինուած իջևանին որ 'ի վերայ ճանապարհի, շինեալ 'ի սուղղան Մուրատայ, քարաշէն, մեծ և բազմակամար, հանգստարան կարաւանաց:

ԹՈՒՐՀԱԼ կամ Թրիւարա, գիւղաքաղաք փոքր, վեց ժամաւ հեռի յիյնէպա. զարէ, գետոյ ընդ մէջ նորա անցանելով. 300 տամբք. շինուածքն կարի հասարակ. առատ և անուանի են սեխենիքն:

Ե Ի Դ Ո Կ Ի Ա

Ութ ժամաւ հեռի 'ի Թրհալայ ընդ դաշտավայր ճանապարհ, 'ի հարաւոյ նորին՝ ընդ առաջ լինի Եւդոկիացոյ քաղաքն (ԹՕՔԱԴ) 'ի ձորամիջի, յերկից կողմանց պատեալ 'ի լեւանց, յորոց յանուանէ յիշատակին Ղըթղըթ և Խաչ-տաղը. և տունք և փողոցք առհասարակ 'ի ստորոտէ սկսեալ հասանեն մինչև ցկէս լեւանցդ 'ի վեր, դժուարեւանելի 'ի վերին թաղս՝ մանաւանդ որոց չենն սովորեալ:

Շինուածք տանցն թէպէտ և ըստ արտաքին տեսլեանն անշուք և կաւակերտ որ մով, զի անդ սակաւագիւտ է քար, սակայն ներքինն զարդարուն է և նկարէն ըստ տաճկական ախորժակաց։ Օդ քաղաքին, թէպէտ և թանձր, սակայն ոչ ինչ համարեալ է այդ առ բնակիչսն. զի պարտէզք բազմապատիկ պտղատու ծառոց, և ցանկալի այգեստանքն արտաքոյ քաղաքին, որոց նման սակաւ ուրեք գտանի, բարեխառնեն զամենայն ծանրութիւն բնութեան։

ԲԵՐԴՆ ԵՒ ՃԼԱՄՊՈՒԼԱՅՆ. — Ի գաղաթման ապառաժ լերինն, որ է ըստ արեւմտից կողմանէ քաղաքին՝ է բերդն քայքայեալ մեծաւ մասամբ և անշուք քան զբերդն Ամասիոյ և անմարդարնակ։ Այլ ինչ նշանաւոր չէ մնացեալ անդ, բաց ՚ի ճլաւ պոշրայէն, որ մեծ և ահեղ է քան զԱմասիոյն և սաստիկ առ ՚ի շեղ. և մտանել ՚ի ներքս վտանգաւոր առ իսպառ խանգարելոյ սանդղոցն։ Ասի թէ յառաջ ժա մանակաւ մինչդեռ անեղծ կային աստիճանքն, որ համարձակէրն իջանել ՚ի խորս անդ, լսէր զձայն պղնձի ջրանօթոց բաղանեացն որ ՚ի ստորոտս բերդին։ Ընդ ձախմէ վանդակապատ երկաթի դրան բերդին ՚ի ներքուստ է արձանագիր յոյն թերի. (թիւ 14)։ Արտաքոյ դրան բերդին կան ՚ի գետնի շարեալ յիսնիւ չափ մեծամեծ ուռմբք քարեղէնք։

ԵՐԵՐԻՆ ԹԻՄԱՐԻԱՆԷՔ ԿՈՒ ՄԵՏՐԵՍԷՔ. — Նման շինուածոյ թիմարխանէին Ամասիոյ նն և որ յԵւդոկիա, յորոց մին բնիկ թիմարխանէ կոչեցեալ մեծ է և փառահեղ քան զԱմասիոյ, ճոխ ամենատեսակ տաճկական փորուածովք ընդ ողջոյն տարածութիւն ճակատուն. ողջ կան տակաւին ամենայն կողմնակի սենեակքն, և ՚ի միումն գերեզմանք դադաղաձև։ Ի վերայ արտաքին դրանն մեծի երկուստեք պատկերք առիւծու բարձրաքանդակ անարուեստ։ Երկրորդն թէպէտ և իջեւան է արդ ճանապարհորդաց, սակայն եւ նա նոյնատեսակ շինուած էր յառաջագոյն, այսու ևեթ տարբերեալ զի կրկնայարկ է սա և որմունքն յախճապակօք պատեալ. զսա ոմանք մէտրէսէ կոչեն։ Իսկ երրորդն կարի փոքր, անշուք ՚ի ներքս, և զարդք արտաքին դրանն սակաւ և պարզ։ Երեքին գոքա ՚ի միում թաղի չինեալ են ոչ շատ բացատ ՚ի միմեանց։ Ստորե քան զերրորդն ՚ի պարտիզի ուրեք է մահարձան հին սրածայր գմբէթիւ, յորում ասեն զգերեզման որդւոյն Լէնկթէմուրայ։

ԵԳԵՂԵՑԻՔ. — Ճոխ է Եւդոկիա եկեղեցեօք. յորս առաջին համարի մեծութեամբ Ս. Ստեփաննոս նորաչէն. նոյնաձև է և նոր եկեղեցին Աւետման, այլ փոքր քան զնա։ Իսկ հնաչէնքն են, Աստուածածին, Ս. Մինաս, Ս. Լուսաւորիչ, Քառասուն մանուկ, Ս. Գէորգ, և Ս. Յակոբ այրեալ. հնգեքեան սղբա անձնք են և մթինք, թէպէտ և կուտինացի յախճապակօք պատեալ ոմանց խորանքն և բեմքըն, և Լուսաւորիչին՝ ամենայն կողմանքն մինչև ցծայր առաստաղին։ Գոյ և եկեղեցի մի փոքր՝ սակաւաթիւ Յունաց՝ յանուն սրբոյն Գէորգայ։ — Հայազգեաց տունք հաշուին 1650։

ՄԶԿԻՔ. — Առաջին ՚ի մզկիթսն է Ալիփաշա ձաւիւսի, առ որոյ գաւթիւն են ութ կճեայ սիւնք, և ներքնախարիսիք նոցա պղնձեայք. է նորա վերնատուն երկուստեք որ հայի ՚ի մէջ մզկիթին։ Երկրորդ Մէյուսն ձաւիւսի փոքր քան զմիւսն, և հրապարակ մեծ առաջի նորա. կոչի սա եւ Սուլդանիէ. իբր զի սուլդան Մուրատ որ պատուիրեալ էր շինել զսա համաշտի միւսոյն, ՚ի դարձին իւրում ՚ի

Բաղդասարայ տեսեալ զի փոքր է քան զնա, հրամայեաց ոգիս եօթն 'ի գլխաւոր շինողացն սպանանել և քակել զմզկիթն. այլ մայր նորա աղաչեալ զերծուցանէ զնոսա, և զծախս շինուածոյն վճարեալ նմա՝ յիւր անուն սեփականէ Սուլդանիէ: Կրկին մզկիթքդ երեւելի համարեալ են քանդակօք դրանցն:

ՂԱԼԻԱՆԷ. — Երեւելի է յոյժ Ղալիսանէ, այն է հալոց պղնձոյ, նորաչէն մեծ և ճարտարարուեստ, շինեալ առ սուլդան Մահմուտաւ ըստ ոճոյ եւրոպացի գործարանաց. նմին իրի և հինն որ կայր յառաջնմէ, խափանեցաւ: Ամենայն հանք պղնձոյ մերձակայ սահմանացն՝ աստ հալին և աստի սփռին յայլ և այլ տեղիս. յայն սակա ճարտարք պղնձեղէն անօթոց բազմաթիւ են 'ի քաղաքիս:

ՋՈՒՐԲ. — Առատութիւն ջուրոց քաղաքիս նման է Պրուսայի, գուցէ առաւել քան զայն. սակայն ոչ յայլ և այլ ականց իջեալ, այլ 'ի միոյ միայնոյ՝ գոր Պէկզաւս ասեն. յորմէ գետնափոր ջրանցիւք բաժանի 'ի փողոցս քաղաքին և 'ի տունս, և առաջ մի նորա գնաց 'ի Ղալիսանէն: Իսկ իսիս գետ անցանէ արտաքոյ քաղաքին ընդ հինգկամարեան քարաչէն կամրջուան:

ՎԱՃԱՌԱՎԱՆՈՒԹԻՒՆ. — Վաճառականութիւն քաղաքիս ծաղկէր երբեմն և մինչդեռ Տաճկաստան չև ճոխացեալ եւրոպացի ձեռագործովք՝ նախնի տարազու վարէր, 'ի յարգի գոլով նկարադրոյժ՝ կտաւեղինաց նորա ընդ ամենայն Ասիա. այլ 'ի դադարել գործածութեան նոցին, թէպէտ և ոչ իսպառ, աղօտացաւ յոյժ և նախկին շուք վաճառականութեան նորա, և հալոց պղնձոյն և եթ մնաց նմա 'ի միսթարութիւն. այլ եթէ 'ի կաւեղէն անօթոցն Եւրոպայ չգործի և նմա խափանուան իսպառ, գէթ տկարանայ մեծապէս: — Ի պատուականութենէ խաղողոյ այգեացն թէպէտ ընտիր լինի գինի, այլ սակաւատե ասեն. նմին իրի և խաղող բազում առաքեն այլուր, ուրանօր օդոյն պատուականութեամբն և գինին տեւէ անեղծ:

ՍՈՒՐԲ ԱՆՆԱ, ՀԱՅՈՑ ՄԵՆԱՍՏԱՆ. — Մենաստան Հայոց, ժամաւ հեռի 'ի քաղաքէն ընդ հիւսիս 'ի ստորոտ լեռինն Եւայլաձրիս կոչեցելոյ, բարձրահայեաց և գեղեցկադիր. առաջի նորա դաշտորայք և այգեստանք: Վերջին շինութիւն մենաստանիս եղև յամին 1828 յառաջնորդութեան Գէորգայ եպիսկոպոսի որ վախճանեցաւ 'ի 1832, և գերեզման նորա է հանդէպ դրան եկեղեցւոյն: Ամենայն բնակարանք մենաստանիս փայտաչէնք են:

ՎԱՆԲ ՅՈՒՆԱՅ. — Տասն վայրկենիս 'ի բացեայ 'ի Ս. Աննայէ յարեւելս կոյս է վանք Յունաց յանուն վերափոխման Աստուածածնի, 'ի տեղին որ Կէքս կոչի, այն ինքն է ԿՈԿԻՍՈՆ որպէս կարծեմ, ուր աքսորեցաւ երբեմն Ռսկերեւան, թէպէտ և տեղին անբնակ է այժմ 'ի տանց: Զեկեղեցւոյն շինութիւն ոմանք թէ ուղոսի տան և այլք Եւդոքսիայ. կան 'ի նմա չորս կճեայ սիւնք, երկու և կէս մեղր բարձրութեամբ, և պատկեր մի Աստուածածնի Յիսուս որդւովն, որ մի է ասեն յեօթանասուն պատկերաց յօրինակելոց յերից անտի պատկերաց աւետարանչին. իսկ այլ երեւելի հնութիւն չիք անդ: Կիսով չափ եկեղեցւոյն վերստին շինեցաւ զայս ամ (1844) հանդերձ աւրնթեր փայտաչէն բնակարանօք. 'ի նորոգութեանն գտին ընդ երկրաւ խեցեղէն անօթս, և աշտանակ մի մեծ բռեալ, և օղամանեակք 'ի վերայ նորա. և բղովս մեծամեծս, յորոց 'ի միումն էր գինի

վանն պատարագի և 'ի վերայ խեցեղէն խփին դրոշմեալ ձև նշխարի պատարա-
գին Յունաց . իսկ գինին 'ի ջուր լուծեալ , որպէս պատմեցին ականատեպը :

Կ Ո Մ Ա Ն Ա

Երկու ժամաւ հեռի յԵւդոկիոյ յարեւելս կոյս է աւերակ ԿՈՄԱՆԱՅ քաղա-
քին , երբեմն հանգստարան Յոհ . Ոսկերբերանի , ըստ բաւականին մեծատարած
երկուստեք գետոյն : Բովանդակ շինուածոցն հիմնայատակ եղեալ ոչ ինչ նշանա-
ւոր երեւի անդ , բաց 'ի քարաշէն կամրջէ գետոյն և 'ի միոյ կիսափուլ բաղանեաց
և այն անշուք ճարտարապետութեամբ : Ի վերայ քառակուսի բարձրադիր վիմի
միոյ խորտակելոյ կայ թերատ արձանագիր յոյն (թիւ 15) . և ընդ առաջին կա-
մարաւ կամրջին այլ երեք արձանագիրք առնթեր միմեանց և չորրորդ մի ևս 'ի
ստորեւ (թիւ 16) :

ՍՈՒՐԲ ԹՈՉՈՒՆ . — Ի վեր քան զաւերականն Կոմանայ քառորդաւ միով հեռի առ
ճանապարհաւն կայ ապառաժ քար մի միակտուր և մեծ , և անունն նորա Սուրբ
քաջուն . զորմէ աւանդեն եթէ նախ 'ի Գրիգորէս գեղջն կայր , որ է յայնկոյս
գետոյն 'ի վերայ գազաթան լերինն բարձու . Գրիգորի սքանչելագործին 'ի քա-
րողել հեթանոսաց և 'ի չհաւատալ նոցա և նշան խնդրել 'ի հաստատութիւն բա-
նիցն , հրամայէ ապառաժի մեծի վիմին ելանել և տեղափոխել անդ ուր այժմն
կայ : Երկու սենեկաձև փորուածք կան յապառաժին , մին յառաջոյ դժուարա-
մուտ , և միւսն 'ի կողմանէ ընդ ձախմէ յորում կան երկու վիմափոր գերեզմանք
դատարկք և միապաղաղ 'ի նոյն ապառաժէ : Ի ճակատ քարաժեռին կայ արձա-
նագիր տապանի . (թիւ 17) : Քառորդաւ միով բացագոյն առ նոյն ճանապարհաւ
կայ կոյտ մի քարանց յորում ասեն լինել զառաջինն զհանգստարան Ոսկերբերա-
նի . և առ նովաւ աւերակ եկեղեցւոյ որոյ հիմունք ևեթ երեւին յեզր գետոյն :

ՊԻՋՆՈՒԻ . — ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ՎԱՆՔ . — Երկու ժամաւ հեռի 'ի Կոմանայ է գիւղն Պիզե-
ռի 'ի լեռնամէջս , և տունք 'ի նմա քառասնիւ չափ տաճիկ և Հայք սակաւ : Ե-
րեւելի է 'ի նմա մենաստանն Հայոց Ոսկերբերան Կոչեցեալ , որ վերստին շինեցաւ
յամին 1842 յառաջնորդութեան տեառն Յակոբոսի : Ուխտատեղի է մենաստանս
սակա վիմափոր գերեզմանին Յոհ . Ոսկերբերանի անդ եղելոյ , որ բերաւ 'ի Կոմա-
նայ : Բուն եկեղեցին նորաշէն է և գմբէթ նորա փայտեայ : Յաջակողմեան աւան-
դատանն որ 'ի թիկանց խորանին է մատուռն Ոսկերբերանի , և գերեզմանն նորա
առ որմով 'ի մթնագոյն կճոյ , նոյնպիսի է և կափարիչն քանդակազարդ եզերօք :
Զիւր խորան 'ի վերայ գերեզմանին . այլ 'ի կողմանէ նորա կայ խորան յանուն
Սուրբ նշանի . և առնթեր նորին այլ խորան Պետրոսի և Պօղոսի : Իսկ 'ի ձախա-
կողմն եկեղեցւոյն գոյ այլ մատուռն անձկագոյն յորում Յոյնք եկեալ պատա-
րագեն երբեմն : Անժանօթ է ժամանակն յորում բերաւ այսր 'ի Կոմանայ վիմա-
փոր գերեզմանն Ոսկերբերանի : Թէպէտ և նոյնպէս անժանօթ է ժամանակ ընա-
կելոյ Հայոց 'ի գիւղս յայս , սակայն 'ի գերեզմանատան նոցա երեւի թուականն մի
ի շիրմի ԶԼԵ (1286) :

ՄԱՐԾՈՒՄ ԼԵԱՌՆ. — Ի մէջ լերանց կողմանցս այսոցիկ առաջին համարի Մա-
րագում լեռնն ոչ այնքան բարձրութեամբ քան թէ տարածութեամբ. զի գա-
գաթն նորա տափարակ է ընդարձակ, որ 'ի հարաւոյ 'ի հիւսիս տեւէ ժամն եր-
կուս, և յարեւելից յարեւմուտս երեք:

Ս Ե Ր Ա Ս Տ Ի Ա

Սերաստացւոց քաղաքն կառուցեալ կայ 'ի դաշտավայրի, առ ստորոտով Մա-
րագում լերին, Ալիս գետոյ կիսաժամաւ 'ի բացեայ անցանելով ընդ կամուրջ մի
նորա բազմակամար: Համօրէն տանց քաղաքին հողայարկ գոլով, քաղաքն ամե-
նայն հողագոյն իմն դաշտավայր երեւի 'ի լեռնէն. և որմքն կաւակերտք, շինուածք
անշուքք և փողոցք անհնարին տղմաշաղախ յերթեկութենէ սայլից մանաւանդ
յաւուրս անձրեայնոյ, զգիւղաքաղաքի կերպարանս տան նմին, թէպէտ և աթոռ
է մեծի փաշայի: Անուանի էր առ նախնեօք և արքայանիստ իսկ, այլ արդ այն-
պէս խրթնացեալ 'ի չքոյ զի և ցանկալի հնութիւնքն արքայականք և սրբա-
զանք, (զի վկայարան նահատակաց հանդիսացաւ ընդ դարս դարս), աւերեալ և
գրեթէ անյայտացեալ, դոյզն աւերակօքն ծանօթանան:

ԲԵՐԴՔՆ ՎԵՐԻՆ ԵՒ ՍՏՈՐԻՆ. — Ի վերին գագաթան լեռնակի միով կայ բերդն ա-
ւերակ. չիք ինչ նշանաւոր 'ի նմա 'ի նախնի շինուածոց. առ երկրորդ գրամքն
ևեթ 'ի վերայ պարսպին կան տաճիկ արձանագիւղք. և առնթեր նոյն դրան 'ի
ձախմէ՝ խեղդան քար, սանդաձև փորեալ 'ի մէջն և 'ի կողմանէ ծակեալ. ընդ
որ չուան անցուցեալ եւ եղեալ զգլուխ յանցաւորին 'ի սանդի անդ խեղդէին:
Իսկ ստորին բերդն մեծատարած կրկնապարիսպ է, խրամ լայն ընդ մէջ կրկին
պարսպացն ունելով ընդ ողջոյն չրջապատն. բայց արտաքին պարիսպ նորա կոր-
ծանեալ է: Ի բերդի աստ է շինուած ինչ հին անյարկ, որոյ որմունք կանգուն կան
տակաւին. ճակատ նորա ողջոյն քանդակազարդ փառահեղ ըստ ձեռն զարդուց
թիմարխանէին Եւդոկիոյ, այլ լաւ քան զայն և անեղծ. զոր և գերեզման ասեն
Սենեքերիմայ վասպուրական արքայի. և են իսկ 'ի նմա գերեզմանք: — Նոյնպի-
սի է զարդուք և նովին ճարտարպետութեամբ միւս շինուածն արտաքոյ բերդին,
զոր արքունիս նորին Սենեքերիմայ ասեն: Թէպէտ և երկոցուն նոցա կրկնակի
մինարէք կան 'ի վերայ պարսպաց ճակատուցն, սակայն յայտ է թէ յետ ժամա-
նակաց շինեալ են այնպիսի: Զերկրորդս զայս տաճիկք Կեօք մետրէսէ ասեն:

